բացին այսօր։ Օրս զՀասան աղային Շամլոյ զտունն քարեցին թէ Վասն է՞ր մեր ընկերացն երես տվիք դուք, որ այսպէս հաչարութիւն կ'անեն, և քո մարդոցն ես զայսքան մարդն չէ՞ր ես ժողովեր ի վերայ քո. դու այսպէս երդում չարի՞ր ի մեր հետն ի չէթմէյտանն թէ Վասն Աստուծոյ՝ ոչ մալի, ոչ մուլքի, ոչ բստակի, ոչ մանսուպի, ոչ փառաց՝ այլ վասն Աստուծոյ եւ խաղաղութեան աշխարհիս եւ կենաց թագաւորին յառաջացուսցենք զբանս, այժմ (տող մը կորսուած)*։ Եւ նա ելեալ ի այն տնէն, որ տվեալ էր տէֆտ[էր]տարն ի միրիէն ա[ն]արծաթ, եւ անտի [ել]եալ գնաց ի սահման կոտրած գ . . .ին մի փոքր տո[ւն] մտեալ։ Օրս տէֆտէրտարն, որ Մուստաֆայ տէֆտէրտարի որդի էր, այսքան խառնակութեանս մէջն հարստացաւ և հպարտացաւ և գրեալ մի արզ թագաւորին թէ Թագաւո՛ր, որ դու ես, ահա՛ վէզիրն մեռաւ, ահա՛ քեզ ԴՃ քսակ, ինձ տուր զվէզիրութիւնն։ Օրս մէկ Տեարպէքիրցի էրէց մի վաղջանեցաւ ի Սուրբ Գէորք. հակառակ էր մեր Վարդապետին։ Օրս մի քանի չօրպաճի եւ օտապաշի խորհուրդ առեալ թէ Ի՞նչպէս անեմք, ահա՛ աշխարհ կու աւերի, ես առաւել քաղաքս, և մեր անունն զայ թէ հաչարութիւն առնողն չէնկիչէրի է եւ այսպէս չարութիւն կու գործեն, ոչ տաճիկ եւ ոչ հայ կ'ասեն, զամենեսեան կու նեղացնեն. երթանք տանք զմեր արզն ի թագաւորն։ Զայս ասացեալ գնացեալ ի թագաւորն, միըստմիոջէ գրեալ և պատմեալ և ասացեալ թէ Եւ դու հրամանքդ երես տվիր Հասան աղային և զօրպաներուն, որ նոցա մարդն և մերս այսպէս կ'անեն, որպէս վերասացաւ. և թագաւորն զնոսա ուղարկեալ սիրով թէ Դուք գնացէք ի ձեր բանն և ես գիտեմ զինչ անելոց եմ։*

Շաբաթ օրս (12 Ապրիլ) *գնացի ի մեր ժամն, թապախ բռնեցի էջմիածնայ։ Դէմ առաւօտվան անձրեւ*